



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10633

658

7-39

51
p. 1038

150

2002

ՄԻՄՈՆ ԶԻՍՄԻԿԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԳ

ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ


ԿԱՄ

ՏԱՐԵՐՔ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ

Պատմութիւն վաճառականութեան եւ Ուսումնասիրութիւնք վաճառականութեան ամէն ճիւղերուն վրայ. — Առեւտրական Օրէնսգիտութիւն, Աշխարհագրութիւն, Տնտեսագիտութիւն. — Վաճառագիտութիւն. — Թղթակցութիւն Հայ. Տասկ. Գաղ. եւ Անգլ. լեզուներով. — Արհեստից եւ արհեստական նոր զիւտերու վրայ ծանօթութիւններ. — Առեւտրական, սակարանական եւ պանրայի հաշիւներ եւայլն.

Հասոբ Ա. — Տէր Ե.



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԷՐԵԱՆ

1901

ՄՆԱՆԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ա. — 1. Սահման. — 2. Մնանկութիւնն ի Հոտմ. — 3. Մնանկութիւնը Միջին Դարու մէջ. — 4. 1673ի հրամանագիրը. — 5. Մահուան պատիժ. — 6. Դատական հաշուեյարդարութիւն. — 7. Օտար երկիրներու օրէնքները. — 8. Քաղաքային մնանկութիւն. = Բ. — 1. Պանքուդ. — 2. Տեֆօնֆրիւր. — 3. Գօնգօրսադօ. — 4. Անդլիական դրութիւն. = Գ. — Առեւտրական դատարանի ձեռնհասութիւնը. = Դ. — 1. Սիցիի. — 2. Ժիւժ գովիսեր. — 3. Մասս. — 4. Մնանկին կինը. — 5. Մնանկին պաշտօնեաները. — 6. Առանձնաշնորհեալ պահանջատեարք. — Ե. Ինիօն. = Զ. Մնանկութիւն ընկերութեանց. = Է. Պատուի վերահաստատում. = Ը. Մնանկութիւնները միջազգային օրէնքով. = Թ. Վիճակագրութիւն. = Ժ. Օսմանեան օրէնքները՝ մնանկութեան մասին. = ԺԱ. — Մատենախօսական :

Ա.

1. — Եթէ բնական է որ վաճառական մը իր գոյքն ուզածին պէս գործածելու ազատութիւնը վայելէ որչափ ատեն կը վճարէ պարտքերը, նոյնքան բնական է արդարացի է իր գոյքերուն գրաւումը, երբ վճարումները դադարեցնէ: Այս մտածման կը պատասխանէ Սնանկութիւնը, որ իր պարտքը չվճարող վաճառականի մը գոյքերուն օրինական հաշուեյարդարութիւնն է: Օրէնքը կը միջամտ՝ պահանջատէրներուն չահերը պաշտպանելու համար և անոնց միջև համեմատական հաստատութիւն մը կը պահէ: Խիստ հակակշիռի մը կ'ենթարկէ չահակիցներուն ցուցուցած թուղթերը: Մնան-

կին գործերը կը յանձնէ փորձ սինսիֆներու և վճռին յայտարարութենէն քիչ առաջ պարտականին կատարած գործողութիւնները կը ջնջէ: Վերջապէս պարտքերը կը մաքրէ, առանց անպատճառ անոր գոյքն ստակի վերածելու, զի սնանկը կրնայ՝ գօնգօրսադոյին ոյժով՝ նորէն իր գործին գլուխն անցնիլ:

2. — Մնանկութեան ծագումը շատ հին է: Հռոմայեցիք պարտականին ինչքերը կը գրաւէին և աճուրդով կը ծախէին ամէնքը մէկ: Մաս առ մաս վաճառումն Ստորին Կայսրութեան ատեն միայն ի գործ դրուեցաւ: Այս կազմակերպութիւն յաջորդած էր ուրիշ դրութեան մը, որ շատ հին ատեններէ ի վեր կը գործադրուէր ի Հռոմ, այն է պարտականին բանտարկութիւնն և իբր գերի նկատուիլը: Բարքերու յառաջդիմութեան հետեւանքով վերջ ի վերջոյ պարտականն իբր գերի նկատելու այս դրութիւնը դադարեցաւ և անոր ինչքը պատասխանատու բանուեցաւ առկախ պարտքին հատուցման համար: Եւ արդարեւ ամէնէն տրամաբանականն է պարտականին ինչքը գրաւել ո և է կերպով, երբ անիկա ի վիճակի չէ իր յանձնառութիւնները կատարելու: Ահա ճիշտ այս գրաւման մէջ կը կայանայ սնանկութիւնը:

3. — Միջին դարուն, հռոմէական սնանկութեան այս ձեւն երկար ատեն մոռացման ենթարկուեցաւ: Արեւմտեան Եւրոպայի մէջ գործածուած մէթոտն աւելի կը նմանէր գերմանական իրաւաբանութեան ընդունած գրաւումի դրութեան որ սնանկութենէ տարբեր բան մ'ըլլալով, ի գործ կը դրբուէր այն ինչ սպրանքին կամ այն ինչ տեսակ սպրանքներու վրայ: Հռոմէական սնանկութիւնը վերահաստատուեցաւ խալիպական քաղաքներու մէջ որք այն ատեն ընդարձակ սահմանի մը վրայ փոխանակութիւններ կ'ընէին Արեւելքի հետ: Այդ քաղաքներու կանոնադրութեանց մէջ խիստ հետաքրքրական տրամադրութիւններ կային ընչից գրաւման այս եղանակին վրայ:

4. — Մնանկութիւնը Ֆրանսա մտաւ Լուի ԺԳ. ի ատեն, 1673ի հրամանագրով: Լիօն քաղաքի յատուկ և 1667 Յունիս

2 թուակիր կանոնագրութիւն մ'ալ կար, ուր սնանկութիւնը, ինչ ինչ կէտերու մէջ, աւելի կազմաւորեալ հանգամանք մ'ունէր, քան ինչ որ չեղաւ քանի մը տարի ետք Լուի ԺԳ. ի հրամանագրով:

5. — Ֆրանսայի թագաւորներն արդարեւ օրէնքներ դրած էին իրենց պարտքը չհասուցանող վաճառականներուն դէմ, բայց այս օրէնքները զուտ պատժական հանգամանք մ'ունէին: Կարգ մը հրամանագրեր, որոց մին Ֆրանսուա Ա. ի օրով, մահուան պատիժ կը տրամադրէին սնանկներուն համար:

6. — Ֆրանսական Առեւտրական Օրինադիրքը, որ 1807ին քուէարկուեցաւ, կանոններու ենթարկեց սնանկութիւնը իր Գ. հատորին մէջ, որ ետքերը բոլորովին փոխուեցաւ: 1838 Մայիս 28 ի օրէնքը մեղմացուց այն խտութիւն, զոր Առաջին Կայսրութեան օրէնագրութիւնը ցոյց կուտար սնանկին և անոր ընտանիքին նկատմամբ: Այս օրէնքին ամենամեծ արժանիքը եղաւ հաշուեյարդարութեան ընթացքը կանոնաւորել աւելի ճշտութեամբ և նուազ դանդաղութեամբ քան ինչ որ բրած չէր 1807 ի Օրինադիրքը: Մնանկութեան կազմական կամ օրինական մասն յատուկ խնամք կը պահանջէ: Եթէ դրութիւնը շատ խիստ ըլլայ, պարտականը բոլորովին կը կործանէ, կը լմնցնէ: Եթէ ներդրամիտ կամ թոյլատու ըլլայ, խարդախութիւնները կը նպաստաւորէ, կը քաջալերէ: Եթէ դատաւարութեան եղանակն երկար ու բազմաժամ ըլլայ, կը վհատեցնէ պահանջատէրները, որք ի հարկէ ստիպեալ պիտի ընդունին պարտականին կողմէ իրենց առաջարկուած բարեկամական կարգադրութիւնները, մինչ ա՛յնպէս ըլլալու է որ վաճառականք օրինական ու դատական եղանակաւ կարգադրութիւնը նախամեծար սեպեն ուրիշ ամէն եղանակէ: Ընդհակառակն եթէ դատավարութիւնն արագ ըլլայ, պահանջուած երաշխաւորութիւնները կը ջնջէ և նենդութիւններու տեղի կուտայ: Երկու հակառակ շահերուն յարմարելու է, կամ, ուրիշ խօսքով, մէկ կողմէ ըստ կարի գոհացում տալու է պահանջատեարց որք կարելի եղածին չափ շատ առուելութիւն ձեռք բերել կը

Չանան և միւս կողմէ միջոց տալու է պարտականին որ իր գործը շարունակէ նորէն: 1838ի օրէնքն արդարեւ գոհացուց այս երկու տարբեր շահերը: Անոր հիմը մինչեւ այսօր անխփփոխ մնացած է: Միայն մանրամասնութեան մէջ ինչ ինչ փոփոխութիւններ եղած են 1836 Յուլիս 17ի օրէնքով, որ գօնգօրճաղօն բարեփոխեց, 1872 Փետր. 12ի օրէնքով, որ կալուածատէրերու առանձնաշնորհումը չափաւորեց, և 1895 Փետր. 6ի օրէնքով, որ առեւտրական պաշտօնէից առանձնաշնորհումն աւելի ընդարձակեց: Կարծիքներու մէջ շարժում մը առաջ եկած էր պահանջելով որ բացառիկ պարագաներու գոհ եզոզ վաճառականք նուազ խիստ հաշուեյարդարութեան մը ենթարկուին քան իրենց սխալներուն հետեւանքով սնանկացող վաճառականք: Առեւտրական Օրինագրքի, ինչպէս նաև 1838ի օրէնքին համաձայն՝ իրենց վճարումները դադարեցնող ամէն վաճառականներ միօրինակ դրութեան մը կ'ենթարկուէին: Մեղմացուցիչ պարագաները նկատողութեան առնող չկար: Մնանկութիւնը, իր առաջ բերած աղէտքով, կը հարուածէր այնպիսի վաճառականներ որք ակամայ կործանած էին: Մնանկութեան պատճառած սոսկումն այնքան մեծ էր որ պարկեշտ մարդիկ կը պարտաւորուէին հնարքներ գործածել, իրենց կործանումն յետաձգելու յոյսով: Անոնք ուրիշ արդիւնք չէին ունենար բայց եթէ յապաղել հաշուեյարդարութեան վայրկեանը և վճարուելիք հարիւրին սաշափն աւելի քիչ համեմատութիւններու իջեցնել: Այս պատճառաւ կազմակերպուեցաւ Գոսական հասոյեյարդարութիւնը, 1889 Մարտ 4ի օրէնքով: Իրաւ, դատական հաշուեյարդարութիւնն ալ սնանկութիւն մ'է, բայց գէթ մեղմացած վիճակ մ'ունի: Սովորական սնանկութենէն ունեցած տարբերութիւններն ասոնք են. —

I. Գատական հաշուեյարդարութեան մը առաւելութիւնները վայելելու և սնանկութենէ խուսափելու համար հարկ է որ վաճառականը, իր վճարումները դադարեցնելէ 15 օր առաջ, և ոչ թէ ետքը, դատարանին յանձնէ իր հաշուեկշիւը: Յոսի վիճակ մը պարտկելու համար խարդախ միջոցներ գործածելու տեղ ուղղակի և կամովին արդարու-

թեան դիմելու այս փոյթը վտրճատրելու համար է ահա որ օրէնքը մասնաւոր առաւելութիւններ կը շնորհէ: Այսու հանդերձ ամէն վաճառական, այսպէս գործելով, վստահ չի կրնար ըլլալ թէ անպատճառ պիտի վայելէ դատական հաշուեյարդարութեան մը առաւելութիւնը, զի եթէ իր վճարումները դադարեցնելէ ետքը կամ անկէ 10 օր առաջ կատարուէր գործառնութիւն մ'ըրած է, պարտքը կամ գոյքը ծածկած կամ չափազանցած է, մէկ կամ մի քանի պահանջատէրներու անունը կամովին զանց ըրած է և կամ վերջապէս ո՛ր եւ է խարդախութիւն գործած է, Առեւտրական Ատեանը նորէն սնանկ կը հռչակէ զայն եթէ նոյն խի, իրաց ճշմարիտ վիճակը չգիտնալով, դատական հաշուեյարդարութիւն որոշած ըլլայ:

II. Ուրիշ տարբերութիւններ ալ կան դատական հաշուեյարդարութեան մը և սնանկութեան մը միջև: Առաջին պարագային, պարտականն ո՛չ միայն սնանկ անունէն կ'ազատի, այլ նաև իր քաղաքացիական ու քաղաքացի ըլլոր իրաւունքները չի կորսնցնէր սնանկին պէս: Միայն հանրային պաշտօն չի կրնար վարել, այսինքն Առեւտրական Անեկի անդամ, քաղաքապետական խորհրդական ևլն. չի կրնար ըլլալ մինչեւ որ պատիւը չվերահաստատուի: Քիչ մը ետքը պիտի տեսնենք թէ սնանկի մը դէմ ձեռք առնուած միջոցները շատ աւելի խիստ են:

III. Եւ յետոյ, դատական հաշուեյարդարութեան ենթարկուող վաճառականի մը գործերուն վարչութիւնը սիւնիներու չի յանձնուիր, ինչպէս օրէնք է սնանկին համար, այլ ինք, պարտականը կը մաքրէ հաշիւները, ընկեր ունենալով մասային կողմէ ընտրուած հաշուեյարդար մը, որուն հաւանութեան պէտք է ենթարկէ ըլլոր գործառնութիւնները:

IV. Բայց ըլլոր այս առաւելութիւնները միակ նպատակ մը ունին, այն է գօնգօրճաղոյի մ' կնքումը: Պահանջատէարք կը հրաւիրուին պայմանագրութիւն մը կնքել պարտականին հետ: Եթէ այս պայմանագրութիւնը կնքուի եւ Առեւտրական դատարանի վաւերացումն ստանայ, դատական հաշուեյարդարութիւնն հատուտուն հանգամանք մը կ'ունէ:

Իսկ եթէ գօնգօրսադօն չկնքուի, դատական հաշուեյարդարութիւնը սնանկութեան կը փոխուի: Այսու հանդերձ դատարանն ստիպուած չէ այս փոփոխութիւնն ընել անպատճառ: Կրնայ վճուել որ գործն Խնիօն ըլլայ, դատական հաշուեյարդարութիւնը մնալով հանդերձ:

7. — Մնանկութեան յատուկ դանադան օրէնքներ կան ամէն երկիրներու մէջ: Այս օրէնքներէն շատը 1838ի Ֆրանսական օրէնքին վրայ ձեւուած են: Պեյժիոյ մէջ, 1851 Ապրիլ 18ի օրէնքը գրէթէ հաւատարիմ ընդօրինակութիւնն է Ֆրանսական այն օրէնքին, որու մէջ չէ դատական հաշուեյարդարութիւնը: Լիւեւեմպուրկի Մեծ-Գրտութիւնը, 1870 Յուլիս 2ի օրէնքով, նմանօրինակ կազմակերպութիւն մը տրուած է սնանկութեան: Իսպիոյ Առեւտրական Օրինագրքին մէջ, որ 1883 Յունվար 1էն ի վեր կը գործադրուի, 184 յօդուածներ նուիրուած են սնանկութեան (Հատոր Գ. Տէլ Ֆայիմեքօ, յօդուած 683-867): Այս Օրինագիրքի ընդօրինակութիւնն է այն որ 1887 Սեպտ. 1էն ի վեր կը գործադրուի ի Ռուսացիա: Բայց այս վերջինը, 1895 Յունիս 20 թուակիր օրէնքով մը, կարեւոր փոփոխութիւններ մտցուց իր Օրինագրքին մէջ, մասնաւորապէս հանրային պաշտօնատարներու հանգամանք տալով սինիսիներուն: Սպանիոյ և Բուրգուկալի օրէնքներուն մէջ, որք Պիլապաոյի հին հրամանագիրներէն ներշնչուած են, Ֆրանսական օրէնքներու ազդեցութիւնը շատ տկար է: Սպանիական Օրինագրքին մէջ, որ 1886ի սկիզբէն ի վեր կը գործադրուի, 71 յօդուածներ նշուելուած են սնանկութեան (quiebra) և որոնց մի քանին բարեփոխուած են 1897 Յունիս 10ի օրէնքով: Բորդուկալի Առեւտրական Օրինագրքին — որ 1889 Յունվարէն ի վեր կը գործադրուի — Գ. Գիրքն ամբողջ ուսումնասիրելու է հասկնալու համար թէ սնանկութիւնն ինչպէս կանոնաւորուած է Իբերական թերակղզիի այս մասին մէջ:

8. — Այն երկիրներ, որք Գերմանական հին իրաւաբանութեան կը հետեւին, ուրիշ օրէնքներ ունին սնանկութեանց համար: Տարբերութիւններն յետոյ ցոյց պիտի տրուին:

ԹՈՒՐՔԻՈՅ ԳՈՐԳԵՐԸ

1. — Ս Վ Ա Ջ Ի Մ Է Ջ . —

ՀՅՏԱՔՐԳՐԱՆՈՎ ՄԱՆՐԱՄՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ճշտիւ յայտնի չէ թէ գորգաշինութիւնը ո՛ր թուականին ծագում առած է Սվազի մէջ, բայց կ'երեւի թէ այս ճարտարութեստը երկար ատենէ ի վեր գոյութիւն ունէր հոն, զի այժմ կան հին գորգեր որք շինուած են Սվազի գաւառակներուն սէջ, ի Ջարա եւ ի Սարը-Քըչա, եւ որք՝ իրենց վրայ կրած թուականին համեմատ՝ 150 տարուան հնութիւն մ'ունին: Կը կարծուի թէ 17րդ դարուն սկիզբը մտած է հոն պարսիկ գաղթականներու միջոցաւ: Գորգաշինութիւնն այն ատեն իբր արհեստ նկատուած չէր: Քաղաքացի աղջիկներ իրենց ձեռական ճարտարութիւնը ցոյց տալու համար, գորգեր կը շինէին լոկ անձնական գործածութեան համար: 20 տարիէ ի վեր է որ գորգաշինութիւնը նոր զարկ ու ոգեւորութիւն ստացած է ի Սվազ, զի հին գորգերու արտածումն այն թուականէն սկսած ըլլալով, անոնց տեղ նորեր շինել հարկ եղաւ: Անկէ ի վեր բաւական գորգ արտածուած է այդ վիլայէղէն: Գորգի վաճառականութեան ամէնէն կարեւոր կեդրոնն է Կեսարիա: Գլխաւորապէս Հայ վաճառականներն են որ այս գործով կ'զբաղին եւ առաջին տարիներուն մէջ անոնցմէ շատերը փայլուն գործեր ըրին: Հին գորգերուն մէջ կային մեծարժէք ու հազուագիւտ կտորներ որք 15 կամ 16րդ դարուն շինուած էին ի Պարսկաստան կամ Պաղտատ, ի Կէորտէս կամ Բուլա—Իզմիրի շրջակաները: — Այս տեսակ գորգեր ա՛լ չկան հիմա: Տուները, եկե-

զեցիներն ու մզկիթները վարդարուած են նոր գորգերով :
 Հիները կամ ծախուած կամ գողցուած են : Վաճառա-
 կանք յատուկ մարդեր կը զրկեն շրջակաները , հոս հոն
 մնացած հին գորգերը գնելու համար , զոր ապա կ'արտա-
 ծեն ի Պոլիս : Կ'ըսուի թէ , հակառակ բարձր մաքսին , զոր
 Միացեալ Նահանգաց կառավարութիւնը զրած է , այս հին
 գորգերուն մեծ մասն Ամերիկա կը զրկուին : Գորգաշինու-
 թեան արդի արհեստը շատ ծաղկեալ ու յառաջադէմ վիճակ
 մը չունի ի Սվազ , զի հիմա բուսական գոյներ չեն գործած-
 ուիր , այլ բնանեղիճի գոյները միայն , որք ո'չ փայլունու-
 թիւն ո'չ տեւականութիւն ունին : Բնանեղիճի գոյները , եթէ
 լաւ պատրաստուին , ինչպէս օրինակի համար յիշմիր , լոյսի
 դիմացող գեղեցիկ գոյներ կուտան , բայց ի Սվազ , դժբախ-
 տաբար , շատ ստորին տեսակ գոյներ միայն կը բերուին :
 Ասկէ գատ , ներկարարներն ալ բոլորովին անկարող մարդիկ
 են : Տեղացի ո'չ մէկ ներկարար միեւնոյն գոյնն երկու ան-
 գամ չի կրնար ստանալ : Խիստ յաճախ կը պատահի որ բաց
 դեղին գոյն մը ունենալու տեղ մթագոյն նարնջի դեղին մը
 կ'արտադրեն : Կան ալ որ իրենց ուզած գոյնէն տարբեր ,
 բոլորովին տարբեր գոյն մը կը ծնին : Ներկարարն իբր պա-
 տասխան կ'ըսէ . — « Ես այսչափ կրնամ ընել » : Յետոյ կ'աւել-
 ցընէ . — « Այս գոյնն ալ գէշ չէ : Ի՞նչ ունի » : Ենթադրենք
 որ դիպուածին ծնած այս գոյնէն զոհ մնաք : Գործը հող չի
 վերջանար , զի գորգը լմացնելու համար հարկ է երկրորդ
 անգամ բուրդ գնել եւ ներկել ալ : Կրնաք նէ առաջին գոյնը
 ձեռք անցուցէք , Բուսական գոյներն ալ բնաւ չեն գոր-
 ծածուիր , այնպէս որ անոնց պատրաստութեան եղանակ-
 ները բոլորովին մոռցուած են : Հազիւ քանի մը պառաւ
 կիներ սանկ քիչ մը կը յիշեն : Միայն Քիւրտերը , քաղաք-
 ներէ հեռի ապրելով եւ բնանեղիճի գոյներ հայթայթելու
 վիճակի մէջ ըլլալով , աւելի կամ նուազ բուսական գոյ-
 ներ կը գործածեն : Գորգի ճարտարարուեստին վարդացումը
 գոյներու խնդրին հետ սերտիւ կապուած ըլլալով անզական
 իշխանութիւնք հարկաւ կը ջանան որ ներկարարութիւնը
 յառաջդիմէ փոխանակ յետագիւմելու : Ամէնէն լաւագոյն մի-

ջոցն է որ տեղւոյն թաղապետութիւնը վարպետ ներկարար
 մը բերել տայ եւ գործանոց մը բանայ բուրդերը չափաւոր
 գիներով ներկելու համար : Կրնայ նաեւ բանող իւրաքանչիւր
 գործասեղանի կամ շինուած մէն մի գորգի վրայ պզտիկ
 տուրք մը դնել : Բուսական գոյներու գործածումն ամէն պա-
 րագայի մէջ անհուն բարիք մը պիտի ըլլայ երկրին համար :

Սվազի մէջ շինուած գորգերը գլխաւորապէս Ծ տեսակ են .—

1.— Skockef խալիսի , որ 2¹/₂—3¹/₂ էնտազէ երկայնութիւն
 եւ 1¹/₂—2¹/₂ էնտազէ լայնութիւն ունի :

2.— Նամազլլե սեհնասե , 1¹/₂—2 էնտ . երկյն . եւ 1¹/₄—
 1¹/₂ լայն :

3.— Խուրե (հեյպե) :

4.— Նան խալիսի , բազմոցի համար , 5—6 երկայն . եւ
 1¹/₂—2 լայն :

5.— Նասրզ , բազմոցի բարձ :

6.— Քիլիմ , 4—7 երկ . եւ 2—2¹/₂ լայն . :

7.— Սարբ-բըլա , քիլիմի նմանող գորգ մը , որ 5—9
 երկայնութիւն եւ 3—6 լայնութիւն ունի :

8.— Բերե ֆիլիմ , 4—8 երկայն . եւ 2—4 լայն . :

9.— Քիլիմ սեհնասե , 2—2¹/₂ երկայն . եւ 1—1¹/₂ լայն .

Օրքա խալիսի կոչուած մեծ գորգեր չեն շինուիր ի Սվազ ,
 զի անոնց շինութիւնը դրամագլուխ կ'ուզէ եւ յետոյ անոնք
 աւելի դժուար կը ծախուին քան պզտիկները :

Ահաւաստիկ գորգաշինութեան կեդրոնները .—

| | | |
|--------------|-----------|-----|
| Զարայի | զիւղերուն | մէջ |
| Տիվրիկի | » | » |
| Հաֆիքի | » | » |
| Սարբ-բըլայի | » | » |
| Ազիզիէի | » | » |
| Տարէնտէի | » | » |
| Սվազ քաղաքին | մէջ | : |


Վերոյիշեալ վեց գաւառակներու մէջ մօտաւորապէս 350
 գիւղ կայ , ուր գորգ կը շինեն : Սվազի գործասեղաններուն
 թիւը վեր ի վերոյ 10,000 կը հաշուուի : Այս թիւը կրնայ
 արագօրէն բարձրանալ , եթէ արդի գորգերը դիւրաւ քըլ-

ուին : Առ այժմ միայն բնիկներու կողմէ կը գնուին հինե-
րուն տեղ գրուելու կամ գրացի վիւայէդներու մէջ ծախուե-
լու համար : Հետեւեալ թիւերը վեր ի վերոյ ցոյց կուտան
Սվազի մէջ շինուած գորգերուն տարեկան քանակութիւնն
ու արժէքը .—

| Տեսակ | Միջին Գին | ՂՐՈՒՇ |
|--|-----------|-----------------|
| 1000 հաս Տէօշէր խալիսի | հատը 150 | ղրշ. էն 150,000 |
| 5000 » համազըր սէտճատէ | » 100 | » 500,000 |
| 300 » Եան | » 150 | » 45,000 |
| 4000 » Եաստըր | » 25 | » 100,000 |
| 4000 » Խուրճ | » 20 | » 80,000 |
| 5000 » Քիլիմ, ընտիր | » 150 | » 750,000 |
| 2000 » » ստորին | » 100 | » 200,000 |
| 800 » » խոշոր | » 300 | » 240,000 |
| 2500 » Սէտճատէ | » 25 | » 62,500 |
| 800 » վարագոյր | » 200 | » 160,000 |
| 700 » Պերճանքի գորգ, Սվազի մէջ շինուած | » 400 | » 280,000 |
| | Գումար | 2,567,500 |

Գիւղերու մէջ շինուած գորգերը թանձր (խապա) են եւ
ընդհանրապէս չորս գոյնէ կը բաղկանան .— կարմիր, նա-
ընջագոյն, կանանչ եւ դեղին : Զուտ բրդէ են : Երբեմն
բուրդին կը խառնեն այծի կամ ուղտի մազ : Այն ատեն գոր-
գին արժէքը կը նուազի : 10 տարի առաջ միայն Սվազի շր-
ջակաները գորգ կը շինուէր, բայց շնորհիւ Մէմտուհ փաշայի,
այն ատեն կուսակալ եւ այժմ ներքին գործոց նախարար,
այս ճարտարարուեստ մտցուեցաւ նաեւ Սվազ քաղաքին մէջ
խսկ, որու գորգերը շատ կը տարբերին շրջակաները շին-
ուած գորգերէն : Իրաւ է թէ աշխատութեան եղանակը նոյն
է, բայց գոյներն ու նկարները բոլորովին կը տարբերին
իրարմէ : Սվազի գորգերը շատ նուրբ են : Գործածուած թե-
զանը 300-400 թիւէ կը բաղկանայ առ մէն մի էնտագէ,
մինչ շրջակաները շինուած գորգերունը՝ 130-220 թիւ է :

(Մնացեալն յաջորդ տեսրով)



ՀԱՇԻՆԵՐՈՒ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏԵՏՐԱԿՆԵՐ



Վաճառականի մը տետրակներն իր կացութեան հայելին
եւ գործառնութեանց պատկերն են : Դրամագլխին, եւ գոյ-
քին ու պարտքին իրական վիճակն իր տետրակներուն հա-
շիւներովը միայն կրնայ գիտնալ, որք որչափ կանոնաւոր ըլ-
լան — այսինքն ամէն գործողութիւն իր տեղն արձանա-
գրուած ըլլայ յստակ եւ ճշգրիտ — նոյնքան աւելի գի-
տակից կ'ըլլայ վաճառականն իր կացութեան : Գործին հե-
տամուտ եւ տետրակներուն ուշադիր վաճառականին համար
չեն ո՛չ անակնկալ ո՛չ տագնապ : Չախողուած կամ սնանկու-
թիւն գրկի չէ հազուադէպ են անոր համար, որովհետեւ գիտէ
իր դրամագլխին իրական վիճակն եւ, վաճառականութեան
օրինաց համաձայն, գործերը կ'չափէ, կ'բաղաւորէ դրամա-
գլխին հետ և ըստ այնմ կը գործէ : Այս պատճառաւ ան-
վըրդով կ'մնայ ամէն զէպքի ու պարագայի մէջ :

Կանոնաւոր տետրակ ունեցող վաճառականը գիտէ իր
ապրանաց տեսակն ու քանակը, եւ չի փորձուիր իր պէտ-
քէն, կարողութեանն աւելի բեռան տակ մտնելու, որուն
հետեւանքներն յաճախ աղետաբեր են : Գիտէ իր պարտուց
գումարն ու պայմանաժամը եւ օր առաջ կ'ջանայ պատրաս-
տել, այնպէս որ միշտ կարող կ'ըլլայ օրը օրին յարգել իր
ստորագրութիւնն առանց նեղութեան եւ անխախտ պահել
իր վարկը : Գիտէ իր ապառակին համազուտարը, յաճախոր-
դաց անունները եւ իւրաքանչիւրին պարտքն ու վճարման
եղանակը : Կարողները կ'որոշէ կասկածելիներէն եւ օր առաջ
քաշուելով կը խուսափի անկարողներու պատճառելիք վը-
նասէն : Գիտէ իր առեւտրական գործին բնութիւնը, շահն
ու ծախքը, եւ ըստ այնմ կ'գործէ : Վաճառական մը իր
տետրակներով միայն կ'տիրէ գործին : Ո՛վ որ ուզած ատենը
չի կրնար գիտնալ իր գործառնութեանց սահմանը, մութի

մէջ կը գործէ : Այլեւս դէպքերն ու պարագաները միայն կ'իշխեն անոր շահուն ու պատուոյն վրայ :

Վաճառական մը ո՛չ թէ միայն իր շահուն համար կանոնաւոր տետրակ ունենալու է , այլ ըստ օրինի պարտաւոր է կանոնաւոր տետրակ բռնել : Ամէն երկրի առեւտրական օրէնքներն հաւասարապէս կ'տրամադրեն որ վաճառականք պարտին ունենալ 1. Օրհաշիւ մը (ժուրնալ) , ուր օրը օրին պիտի արձանագրեն ամէն գործողութիւն , 2. Ընդհանուր կշռոյ տետր մը (պիլանշօ) , ուր իրենց տարեկան վիճակը պիտի ներկայացնեն եւ 3. Նամակի ընդօրինակութեան տետր մը :

Վաճառականը չի՛ կրնար առարկել թէ ինք հաշիւ բռնել կամ գիր գրել չի գիտեր , վասնզի այս պարագային պարտաւոր է հաշուակալի մը միջոցաւ կատարել այս գործողութիւն , քանի որ պայման դրուած չէ թէ տետրակ մը անպատճառ իր տիրոջ ձեռագրով պէտք է գրուի :

Գլխաւորապէս երկու պարագաներ կան , ուր կանոնաւոր տետրակներու պէտքը կ'զգացուի անհրաժեշտ կերպով : — Առուտուրի մը եղանակին ու ժամանակին կամ ապրանքի մը տեսակին ու արժէքին համար երկու կողման մէջ վէճեր ու անհամայնութիւններ կրնան ծագիլ : Եթէ վիճողներն իրենց մէջ չհամաձայնելով երրորդի մը կամ դատարանի մը դիմեն , հոն բնականաբար միայն իրենց բացատրութիւնները չեն բաւեր պահանջման մը ստուգութիւնն հաստատելու համար , — որովհետեւ վաճառականական ամէն գործողութիւնք ստորագրութեան տակ կամ վկաներու ներկայութեան չեն կատարուիք միշտ : Դատաւորին կամ երկու կողման միոյն առաջարկութեան վրայ հարկ կ'ըլլայ տետրակները մէջ բերել իբր փաստ : Այս պարագային՝ անկանոն տետրակ ունեցողն իր պահանջումն ապացուցանելու անկարող ըլլալով իրաւունքը կը կորսնցնէ , որովհետեւ Առեւտրական Օրինագրքի 6-8 յօդուածներուն համաձայն կանոնաւոր տետրակները միայն ի նպաստ տիրոջ իսկ անկանոն տետրակները ընդդէմ տիրոջ կ'ընդունուին : Թէեւ ընդհանուր օրէնք է որ մէկն իր գրութիւնը չի՛ կրնար ի նպաստ իրեն գործածել , եւ արդէն Գա-

ղաքային Օրինագրքի 1608րդ յօդուածը վաճառականին տետրակներն իրրեւ գրաւոր խոստովանութիւն միայն կ'ընդունի իր առարկութեանց համար , բայց Առեւտրական օրէնքը բացառապէս կ'տնօրինէ տետրակներն իբր փաստ ներկատել անոնց տիրոջը պահանջումը ապացուցանելու համար եթէ 1. Խնդիրն առեւտրական է , 2. Եթէ երկու կողմերն ալ վաճառական են եւ 3. Եթէ տետրակները կանոնաւոր են : Այս պատճառաւ , վաճառականներու տետրակները քանի մը պայմաններու ենթարկուած են , որպէսզի կարող ըլլան վստահութիւն ներշնչել դատաւորին : Ամէն գործողութիւն թուականի կարգաւ գրելու է , բաց տող կամ երես ձգելու չէ , սխալում մը փոխանակ աւրելու : Ուրիշ յօդուածով ուղղելու է , գիր կամ թուանշան սրբելու , քերթելու չէ եւ տետրակները կաղմելու է :

Երկրորդ պարագան առջինէն աւելի ծանրակշիւ է : Հրապարակի վրայ ամէն վաճառական կ'գործէ , բայց ամէն գործող չի՛ շահիր : Ոմանք կ'շահին եւ դրամագլուխին կ'աւելցնեն կամ հազիւ ծախքերնին կը գոցեն : Ոմանք ալ կ'վնասեն , դրամագլուխին կ'փճացնեն եւ ուրիշին դրամն ալ խորելով կ'սնանկանան : Պահանջատէրերը քիչ անգամ կ'հաճին բարեկամարար կարգադրել գործը : Ընդհակառակը դատօրան կը դիմեն իբր գող կամ խարդախ պատժել տարու համար սնանկը : Ամէն բան մտնի է դատաւորին համար : Ո՞վ պիտի պարզէ սնանկին վիճակը , կամ ո՞վ պիտի պաշտպանէ զայն պահանջատէրերու յարձակումներուն եւ ամբաստանութիւններուն դէմ . — կանոնաւոր տետրակներ՝ ըր միայն : Սնանկն անոնցմ'ով միայն պիտի կրնայ ապացուցանել թէ ինքն ի վնաս պահանջատէրերուն չէ գործած , եւ անձնական ու տնական աւելորդ ծախքեր չէ ըրած եւն . : Տետրակները քննելէ ետք միայն դատաւորը պիտի վճռէ թէ սընանկը ձախողութիւն կրած է գործին մէջ բայց չէ խարդախած : Արդէն օրէնքը ծանր պատիժ կ'տնօրինէ տետրակ չունեցող կամ չներկայացնող սնանկին դէմ :

Վաճառական մը ազատ է իր դիւրութեան համար երկրորդական տետրակներ ունենալ կամ ո՛չ , բայց թէ՛ ներկային ու ապագային եւ թէ շահուն ու պատուոյն համար անհրաժեշտ պէտք ունի օրինական եւ կանոնաւոր տետրակներու , զորս պարտաւոր է շարունակ տան տարի պահել : Ընդհանուր առմամբ կանոնաւոր տետրակ ունենալը վաճառականին գործունէութեան եւ ուղղամտութեան ապացոյցն է , իսկ չունենալը՝ նենգամտութեան : Ա .

On demande à un débiteur le payement
d'un compte arriéré

Cons/ple le 31 Décembre 1900

Monsieur

Des payements considérables que j'ai à effectuer ces jours-ci, me mettent dans la nécessité de faire rentrer les petites sommes qui me sont dues à moi-même de côté et d'autre. Je vous prie donc d'être assez bon pour remettre au porteur de la présente le montant de ma dernière facture, qu'il acquittera en mon nom.

Veillez croire, Monsieur, qu'un besoin urgent a pu seul me déterminer à vous importuner, et agréez l'hommage de ma considération la plus respectueuse.

A. B.

Request made to a debtor for an
unpaid account

Cons/ple 31st Dec. 1900

Sir,

The heavy payments that I have to make just now compel me to get in such small sums as are due to me from all parties.

I therefore beg you to be so good as to remit to the bearer the amount of my last bill, which he will receipt in my name. At the same time I trust you will understand that nothing short of great need could have determined me to apply to you in this way.

Believe me, Sir, to remain yours truly

A. B.

ԱՌԵՒՑՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի Տ Ա Լ Ի Ա

Գ.

(Շար. եւ վերջ)

Աշխարհագրական դիրքը. — Ժողովուրդը. — Երկրագործութիւնը. — Հանրային հարստութիւնը. — Ճարտարարուեստը. — Վաճառականութիւնը [Արտածում, ներածում]. — Հաղորդակցութեանց ճամբաները. — Թղթատարութիւնը. — Գրամն ու Գրամատունը. — Գաղթականութիւնները. — Առեւտրական նաւերը:

Առեւտրական նաւեր. — Իտալիոյ գլխաւոր նաւահանգիստներն են ձեռովա, Նարոլի, Վենետիկ, Պրէնտիզի, Լիվոռնո, Անքոնա: Իտալիա 1870ին ունէր

Առաքաստանաւ 10,083 (980,064 թօնօ)
Շոգենաւ 118 (32,100 »)

1880ին

Առաքաստանաւ 7639 (895,359 թօնօ)
Շոգենաւ 176 (93,698 »)

1899ին

Առաքաստանաւ 5764 (537,642 թօնօ)
Շոգենաւ 384 (277,520 »)

Ինչպէս կը տեսնուի, առաքաստանաւք հետզհետէ նըլազելու եւ շոգենաւք աւելնալու վրայ են:

1899ին Իտալիոյ ծովային առեւտրական շարժումն էր Մոսկ 93,037 նաւ 18,267,000 թօնօ տար. փոխըր. 4 1/2 միլ. ֆր. ապրնր. ելք 92,737 » 18,257,000 » » » 3 1/2 » » »

Իտալիա ունի երեք նաւային ընկերութիւններ Իտալ. ընդհ. նաւարկ. ընկ. որ ունի 100 շոգենաւ, 110,000 թօնօ տար. Վելոչէ » » 15 » 33,500 » » Բարլօ Ռանճի » » 6 » 10,750 » »

Այս շոգենաւային ընկերութիւնք կառավարութեան վճարած են 7 միլիոն ֆր. տուրք (խարխիսի համար): Իտալիա մէկ տարուան մէջ (1898ին) շինած է 163 նաւ, 13,500 թօնօ տարողութեամբ եւ 12 1/2 միլիոն ֆր. արժէքով:

Յամաւային հաղորդակցութեան միջոցներ. — Իտալիա ունի 15,500 քիլոմէրը երկաթուղի, 3000 վայրաշարժ, 8500 վակոն նստելու համար եւ 50,000 վակոն բեռի համար:

Տարեկան ծախք 188,971,000 Փր. և հասոյթ 268,873,000: Երկաթուղիք փոխադրած են 55 միլիոն ճամբորդ և 20 միլիոն թօնօ ապրանք: — Շողեշարժ և ելեկտրաշարժ թրամուէյներու համար 3055 քիլոմէդր գիծ ձգուած է: Շինուած ճամբաներու երկարութիւնն է 265,000 քիլոմէդր:

Թղթատարութիւնն ունի 5800 ճիւղ, որք փոխադրած են 217,250,000 նամակ և 7 միլիոն թղթատարական քարդ: Վերջացող տարւոյն ծախքն էր 62 միլիոն Փրանք և հասոյթը՝ 75 միլիոն:

Հեռագրական քելն 160,000 քիլոմէդր է:

Հեռաձայնը տարածուած չէ:

Իրաւք եւ դրամասուցք. — Իտալիա 1862ին ընդունած է լատին դրամական միութիւնը: Մինչեւ 1899 Յունիս 30 կոխած դրամն է, Ոսկի 427,102,950 Փր. Արծաթ 668,037,025 Փր. Նիքէլ 20,000,000. Պղինձ 83,636,120 Փր.

1898ին Իտալիոյ թղթադրամին գումարն էր 1662 միլիոն Փր. որոյ 576 միլիոնը կառավարութեան և 1086 միլիոնը պանքաներու կողմէ շրջաբերութեան հանուած: Իտալիոյ մէջ երեք դրամատուններ կան, որք արտօնուած են թղթադրամ շրջաբերութեան հանելու. — Իտալական պանքա 630 միլիոն Փր. Նարոլիի պանքա 190 միլիոն Փր. Սիկիլիոյ պանքա 44 միլիոն Փրանք: Ատոնց պահեստի գումարը՝ մինչեւ 1897 Սեպտ. 31՝ էր 600 միլիոն Փրանք:

Իտալիոյ մէջ կան 10 հատ կալուածական վարկի դրամատուններ, 1,600 միլիոն Փր. դրամազլուով, 216 կնայողական Սնտուկներ, ուր ձգուած են 1,383 միլիոն Փր. 4890 թղթատարական Սնտուկներ, 536 միլիոն Փր. ով, 793 խնայողական մասնաւոր սնտուկներ՝ 266 միլիոն Փրանքով: Իտալիոյ ամբողջ պանքաներուն դրամազլուին է 1,700 միլիոն Փր. Իտալիոյ մէջ գործածուած օտար դրամազլուիներու գումարն է 482 միլիոն Փր.:

Կառավարութեան ընդհանուր պարտքն է 1,200 միլիոն Փր.: Մարդ գլուխ կ'իյնայ 400 Փրանք: Առեւտրական Օրինագիրքը Քօս Նաբոլեոնի հետեւողութեամբ խմբագրուած է:

Գաղթավայրք. — Իտալիոյ գաղթավայրերն են 1. Էրիզըէ (Ափրիկէի մէջ) 110,000 քառակուսի քիլոմէդր տարածութեամբ և 195,000 բնակչով. — Ներածում 14 միլիոն Փր. — Արտածում՝ աննշան: 2. Սօմալիի եզերքները, որոց վարչութիւնն յանձնուած է Լոմպարտական առեւտրական ընկերութեան մը: Ա. Գ.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Ա.

Ա.Ղ.ԱՄԱՆՂ. [1. Յատկութիւն, Բաղադրութիւն. — 2. Պատմական. — 3. Շահագործութիւն. — 4. Հատում. — 5. Նշանաւոր ազամանդներ. — 6. Վաճառականութիւն:]

1. — Աղամանդը թանկագին քար մ'է, շատ հին ատենէ ի վեր ծանօթ: Յոյները «աննուած» կ'անուանէին զայն կրակի և ուժգին բախումներու դիմադրելուն համար: Աղամանդը թանկագին յուսութ մը (քըլքսըմ) նկատուած էր Յոյներէն և Հռոմայեցիներէն: Այս հաւատքը դեռ քանի մը հարիւր տարի առաջ կար, երբ արդի քիմիագիտութեան յառաջդիմութիւնք տակաւին պարզած չէին աղամանդին բուն բաղադրութիւնը: — Աղամանդը զուտ բնածուխ է: Զի հալիւր, բայց կ'այրի 1400-1500⁰ տաքութեան մէջ: Ուրիշ ամէն մարմին գիծ գիծ կ'ընէ, բայց ինք չըլլար: Ծանօթ ամէնէն կարծր մարմինն է: Պրագիլիոյ աղամանդն աւելի կարծր է քան Բարեյոյսինը: Աղամանդը երեք տարբեր վիճակներու մէջ կը ներկայանայ. — Բիւրեղացած, Բիւրեղաձեւ, Անձեւ:

Ա. — Բիւրեղացածն ամէնէն ընտիր աղամանդն է, խիտ թափանցիկ և փայլուն: Մութին մէջ կը փոսփորափայլի ելեկտրականութեան ազդեցութեան տակ: Ընդհանրապէս անգոյն է, բայց յաճախ դեղին, և երբեմն սեւ, թուխ, կապտագոյն, վարդագոյն, կանաչագոյն: Կազմուած է զուգաչափ խաւերէ: Իրարու քսուած երկու աղամանդներ մասնաւոր սուր ձայն մը կը հանեն:

Բ. — Բիւրեղաձեւ աղամանդը ո՛չ կը տաշուի ո՛չ կը խաւատուի: Սաւերն անկանոն ձեւ մ'ունին: Փոշիի վերածուելով կը ծառայեն բուն աղամանդը մաքրելու, յղկելու:

9. — Անձեւ աղամանդը թափանցիկ չէ : Կը գտնուի Միսնի Պոլիս (Պրազիլիա), ուր առաջին անգամ 1843ին երեւան հանուեցաւ : Կը կոչուի Բարպօն սոյ կամ բնածխային աղամանդ : Կտորուանքը նախ անկարեւոր ու անարժէք համարուած, այսօր կը ծառայեն ամէնէն կարծր սուրճաժաները ծակելու : Քարպօնադոյի քաղաքը 65 Ֆրանք կ'արժէ : Ամէնէն խոշոր և ամէնէն գեղեցիկ կտորը գտնուած է 1895 Յուլիս 15ին : Բուռի մը (եռմրուք) չափ խոշոր էր : Կը կընէր 630 կրամ կամ 3.150 քաղ և ճարտարարուեստի պէտքերուն համար փոշիի վերածուելէն առաջ կ'արժէր 200,000 Ֆրանք : Կաղապարն առնուած է և Բարիզի Հանքարանութեան Միւզէոնին մէջ կը գտնուի :

2. — Աղամանդի բուն բաղադրութիւնը քանի մը հարիւր տարիէ ի վեր միայն ծանօթ է : Հայր Բօլէն դեռ 1761ին կը հաւաստէր թէ աղամանդը կը բաղկանայ հողէ, ջուրէ և կրակէ : Սակայն 1873ին անգլիացի գիտուն մը փորձով ցոյց տուաւ թէ աղամանդը խիստ տաքութեան մը ենթարկուելուն պէս կ'անհետանար : 17րդ դարուն վերջերն երկու աղամանդներ այրեցին, մէկն արեւին տաքութեան մէջ, ի ներկայութեան Դոսքանայի մեծ դքսին և միւսը՝ հնոցի մը մէջ, Յրանսուա տը Լօրէնի առջեւ : Լափուաղիէ վերջնապէս լուծեց խնդիրը : Արեւին տաքութեան միջոցաւ աղամանդ մը այրեց թթուածինով լեցուն կափարիչի մը մէջ, ուր բնածխական թթու միայն մնաց : Այն օրէն երբ սպացոցուեցաւ թէ աղամանդը բիւրեղացած ածուխ է, շատեր, Միջին դարու հռչակաւոր ալքիմիագէտներուն պէս որք փրկիստփայական քարը կը փնտռէին, մէկ նպատակ միայն ունեցան այն է արհեստական կերպով աղամանդ շինել : Մ. Տէբրէզ յաջողեցաւ ածուխը վերածել շատ բարակ փոշիի մը որ աղամանդ կարծուեցաւ : Անկէ ետք, Մ. Մուսսօն անհունապէս պզտիկ կտորներով աղամանդ ձեռք բերաւ երկար փորձերէ ետք : Իտալացի գիտուն մ'ալ, Մ. Քուիրինօ Մաթօրանա, աղամանդի մասնիկներ գտաւ ածուխի կտորի մը մէջ : Մէկ խօսքով արհեստական աղամանդ պատրաստելու սկզբունքը գտնուած է, բայց 4000 աստիճան տաքութեան

մը և 75 ձիւռ ոյժի պէտք ըլլալով՝ կտոր մը աղամանդն այնքան սուղ կ'ելնէ որ ակնագործները պատճառ մը չունին իրաք անցնելու :

3. — Աղամանդը նախ ելած է եթովպիայէ, յետոյ Հնդկաստանէ և Պօրնէօյէ (Պրազիլիա) : Մինչեւ 18րդ դար Հնդկաստանի հանքերը միայն սնուցին հրապարակը, որ 1727ին յեղաշրջուեցաւ Պրազիլիոյ հանքերուն գտնուելովը : Ծանօթ ամէնէն գեղեցիկ աղամանդներն Հնդկաստանի հանքերէն ելած են : Այսօր այդ հանքեր երկրորդական կարեւորութիւն ունին : Հաղիւ 4-5 միլիոն Ֆրանքի աղամանդ կ'արտադրեն տարին : Պրազիլիոյ հանքերէն մինչեւ հիմա 12 միլիոն քաղ աղամանդ հանուած է : Տարեկան արտադրութիւնն 5000 քաղ է այսօր : Առաջին աղամանդն 1867ին գտնուեցաւ Հարաւային Ափրիկէի մէջ : Անկէ ի վեր Բարբյոյսի և Օրանժի հանքերը գրէթէ մինակ իրենք կը կշտացնեն ամբողջ աշխարհի հրապարակը : Արեւմտեան Կրիբուալէնտ, որ Բարբյուսոյ անգլիական գաղութին մէջ կը գտնուի, 1875էն ի վեր տարին 2,400,000 քաղ կամ 500 քիլօ աղամանդ կը հայթայթէ : Գլխաւոր հանքերն են Տիւրուաբան, Պրիլօնդայն և Քիմպրի, որ ամէնէն հարուստն է : Ասօր հողը կը պատկանէր Օրանժի պետութեան, բայց Անգլիա՝ 1871 Նոյմ. 7ին՝ յանդուգն փորձ մը ընելով՝ գրաւեց և ապա 22 1/2 միլիոն Ֆրանք վճարեց Օրանժի : Քիմպրի 1867էն մինչեւ 1896 Յուլիս 30՝ 59,022,891 քաղ, կամ 11,933 1/2 քիլօ աղամանդ տուած է, մօտ 2 միլիառ Ֆր. արժէքով : Հարաւային Ափրիկէի մէջ գտնուած առաջին աղամանդները գրէթէ բոլորովին գունաւոր էին, մանաւանդ մեծ կտորները : Անկէ ի վեր աւելի գեղեցիկներ գտնուեցան, թէեւ ջուրը ո՛չ այնքան գեղեցիկ որքան Հնդկաստանի և Պրազիլիոյ հին աղամանդներունը : — Աղամանդ հանելու մէթոտներն 1895ին ի վեր կատարելագործուած են : Հանածոն գետինը կը տարածեն և դարձող գլաններով կը մանրեն ու կը մաղեն : Ապա կը դնեն քարէ շարժուն մեծ աւազաններու մէջ : Ծանր մասերը, որ աղամանդ կը պարունակեն, կը գատուին այսպէս, նորէն կը մաղուին և յետոյ սեղաններու վրայ կը

դրուին զատուելու համար : Հսկող պաշտօնեայ մը կ'առնէ խամ աղամանդներն և կը յանձնէ գործաւորներու ուրիշ դասակարգի մը, որոնց պաշտօնն է դասակարգել զանոնք, իրենց գոյնին ու ծաւալին համեմատ : Այս աղամանդներն ամբողջովին կը գնէ Լոնտոնի Սէնտիքան, քաղը 34 ֆր. 35 սնդ. ի : Առաջները հանքագործներն իրենք կը հանէին աղամանդը, բայց յետոյ պեղումներն աւելի խոր տեղուանք կատարել հարկ ըլլալով, գրէթէ անկարելի դարձաւ անհատական աշխատութիւնը : 1877էն սկսեալ յաջորդաբար 18 ընկերութիւններ հիմնուեցան Տէ Պէքրսի մէջ, 57 միլիոն դրամագլուխով, 26՝ Տիւրուաբանի մէջ, 90 միլիոն դրամագլխով, և 17 Պրիգօնդայնի մէջ, 30 միլիոն դրամագլխով : Մ. Սէսիլ Բօսս, Տէ Պէէրսի Տնօրէնը, 1889-90ին միացուց մեծ ընկերութիւնները, Տէ Պէքրսի Բօսսօիթիյը մայնս քրիքի անունով : Ընկերութեան անուանական դրամագլուխն էր 3,950,000 անգլ. ոսկի, 5 անգլ. ոսկինոց 790,000 բաժնեթուղթերով : 1891ին գնեց Բարեյոյսի բոլոր հանքերը, 15 միլիոն անգլ. ոսկի : Այս հզօր կադմակերպութեան շնորհիւ Տէ Պէէրս այսօր իր ձեռք առած է աղամանդի մենաշնորհը, որուն արտադրութիւնը, գինն և սպառումը կը ճշտէ խնդրանքին համաձայն : 1897էն ի վեր ամսական արտադրութիւն որոշուած է 200,000 քաղ. : Ընկերութիւնը, 1894ին, 1,507 սպիտակամորթ և 6,606 սեւամորթ պաշտօնեայ ունէր : Առաջիններն օրական 16.25 ֆր. կ'առնեն, իսկ վերջինները 2 1/2-7 1/2 ֆր. : 1896ին ընկերութիւնն ունէր 720 քիւօ 400 կրամ պատրաստ հանածոյ, 7 միլիոն ֆր. արժողութեամբ, աւելի քան 8 միլիոն ֆր. արժէքով չծախուած աղամանդ և 26 միլիոն ֆր. ի պատրաստ դրամ և առեւտրական թուղթեր : Տարեկան ծախքն է 25 միլիոն և գլխավճարը՝ 15 միլիոն : 1897ին Բարեյոյսի մէջ 3,220,369 քաղ. աղամանդ հանուած է, 4,024,000 սղերլին արժէքով : Եակէրսֆօնդայնի հանքը Օրանժի մէջ է, կառքով 24 ժամ հեռու Քիմպրիէ : Կը շահագործուի ընկերութեան մը կողմէ, որ 1 միլիոն սղեր. դրամագլուխ ունի : 1897ին հանած է 250,000 քաղ. աղամանդ, մօտ կէս միլիոն անգլ. ոսկի արժէքով : Ընկերութիւնն հա-

մաձայնած է Տէ Պէքրսի հետ, որուն բաժնեթուղթերէն 10 հազար հատ ունի : — Աւտրալիոյ մէջ ալ աղամանդի հանքեր կան, մանաւանդ Քըտէկոնկի (Հարաւային Նոր Կալէս) գետին եղերքը և Ինվէրէլի ու Միլեակոնկի մէջ, Սիտնէյէ 130 քիլոմէտր հեռի : Կը կարծուի թէ այս աղամանդներուն բուն երակը կը գտնուի լեռնաշղթայի մը մէջ, ուր սկսած են պեղումներ կատարել :

4. — Աղամանդին հատումը կամ բանումը 1475ին սկսած է Լուիտը Պէրքէմ անուն մէկու մը միջոցաւ որ երկու աղամանդներ ուժով մը իրարու քսած ատեն դիտեց որ երկուքն ալ կը մաշին և փոշի կը վերածուին : Սակայն Պլինիոս և ուրիշ պատմիչներ կ'ըսեն թէ աղամանդին եթէ ոչ հատումը գէթ յղկումը ծանօթ էր Հռոմայեցիներուն և Հնդկիներուն և մինչեւ իսկ Եւրոպայի, Միջին Դարու մէջ : Աղամանդ բանելու ճարտարարուեստն երկար ատեն մենաշնորհ եղաւ Ամսդէրտամի : Այժմ տարածուած է Անվէրսի մէջ : — Աղամանդը նախ կը բարակցենն ուրիշ աղամանդի մը քսելով : Յետոյ անկիւն անկիւն կը կտրեն և ապա կը յղկեն երկանաքարի ձեւով պողպատեայ գործիքներու միջոցաւ, որք ուղղահայեաց առանցքի մը շուրջը կը դառնան և որոնց վրայ աղամանդի փոշի կը տարածեն, իւղի մէջ թրջուած : Գործիքին շարժումը շատ արագ ըլլալու է. վայրկեանը, միջին հաշուով, 2200 շարժում : Աղամանդը՝ յղկուելէն առաջ՝ խաւատումի (clivage) գործողութեան կ'ենթարկուի, այսինքն խաւերուն համեմատ կը ձեղքուի պողպատեայ դանակի մը միջոցաւ, որուն կը զարնեն մուրճով : Աղամանդը կը ծախուի կշիռով : Բանուելէն ետքը 50-60 % կը կորսնցնէ : Խամ աղամանդը զանազան ձեւեր կ'ստանայ բանուելով : Գլխաւորներն են շողակ (brillant) և վարդածե (rose) : Առաջինը 64 անկիւնաւոր երես ունի, իսկ երկրորդը 24 : Կան ալ որ 18 կամ 12 երես (Ֆասեղա) ունին : 6 երեսով ուղանքը հրապարակի վրայ ծանօթ են Անլիքսի ուղա անունով : Խամ աղամանդի գոյնը երբեմն կը փոխուի բանուած ժամանակ :

5. — Նշանաւոր աղամանդներուն մէջէն յիշենք հետեւեալները. —

Ռանա sp մաղամ, որ 367 քառ. կը կշռէ և տանձի ձեւ ունի:

Նիզամ, 340 քառ.:

Մեծ Մօկոյ, որ 1550ին գտնուած է և կը կշռէ 270 ⁹/₁₆ քառ.։ Մէջտեղէն կտրուած հաւկթի մը ձեւն ունի։ Սեփականութիւնն է Պարսկաստանի Շահերուն որք Տերեայի նուր (լոյսի ովկէան) կոչած են զայն։

Օրլօն, Չարին արքայական մականին վրայ։ Կը կշռէ 193 քառ.։ Հնդկաստանի Շէրինկամ կուռքին աչքերէն մին էր, զոր Հայ մը ձեռք ձգելով ծախեց Օրլօնի իշխանին։

Կրան sju f sp Þoufան, 139 ¹/₂ քառ.։ Սեփականութիւն Աւստրիոյ կայսեր։ Արժէք 2,600,000 ֆր.։

Ռեժան, 136 ³/₄ քառ.։ Ուիլեմս Բիդի մեծ հօրմէն գնուած է Ֆրանսայի կայսերական թագին համար. կ'արժէ 12 միլիոն ֆրանք։

Քօ-հի-նուր (լոյսի լեռ), զոր Անգլիա առաւ Լահոտի Ռանային ձեռքէն։ Հաւկթի ձեւ ունի և կը կշռէ 186 ¹/₁₆ քառ.։

Բիկոյ, 182 ¹/₄ քառ., զոր 1801ին Լորտ Բիկոյ վիճակահանութեան դրաւ 750,000 ֆր. ի։

Սանսի, 53 քառ.։ Յանդուգն Շարլի համար բանուած։ Այս աղամանդ ապա անցաւ Բորդուկալի Անդուան իշխանին ձեռք, որ դրաւ ի դերձոյ 100,000 ոսկիի ծախեց Սանսիի Հարլէյ իշխանին։ Անգլիոյ ձէք Բ. թագաւորինք գնելով 650,000 ոսկիի ծախեց Լուի Ժ. Ի. 1792ին գողցուեցաւ և ապա գտնուեցաւ։ Այժմ Հնդիկ իշխանի մը ձեռքն է։

Հօրի կապոյտ աղամանդը, որ կը կշռէ 44 ¹/₂ քառ. եւ գունաւոր աղամանդներու ամէնէն գեղեցիկն է։ Կը կարծուի թէ մէկ կտորն է Ֆրանսայի թագին այն նշանաւոր կապոյտ աղամանդին, որ 1792ին անհետացաւ։

Բեւեռային լուսաւոր, 40 քառ.։ սեփականութիւն իշխանուհի Եուսուրօֆի։

Հարաւային Ափրիկէի մէջ գտնուած ամէնէն գեղեցիկ աղամանդներն են էֆսիսոր, աշխարհի ամէնէն խոշոր ա-

ղամանդը, որ չբանուած վիճակին մէջ կը կշռէր 971 քառ.։ Եակէրսֆօնդայնի (Օրանժ) հանքերէն գտնուած է։ Յետոյ կուզան Ռեյց, 634 քառ. և 428 քառ. ուրիշ գեղեցիկ աղամանդ մը որ գողցուեցաւ, բայց յետոյ գտնուեցաւ։ Սեփականութիւնն է Տէ Պէէրս ընկերութեան, որ 1889ի Բարիդի Արուեստահանդէսին մէջ ցուցադրեց։

6. — Աղամանդին գտնուելէն մինչեւ 1899 համազումար արտադրութիւնն եղած է Հնդկաստանէ՝ 10 միլիոն քառ., 425 միլիոն ֆր. արժէքով, Պրազիլիայէ՝ 12 միլիոն քառ., 500 միլիոն արժէքով և Հարաւային Ափրիկէէ՝ 62 միլիոն քառ., 1960 միլիոն արժէքով։ Համազումար 84 միլիոն քառ. կամ 17,220 քիլօ, 2885 միլիոն ֆր. արժէքով։ Այս երեք միլիառի մօտ գումարը խամ աղամանդին արժէքն է։ Աղամանդը թէեւ նորածեութեան փոփոխութիւններու ենթակայ չէ, բայց իր զինը ելեւէջներ ունեցած է, մանաւանդ 1729ին երբ 75% անկում կրեց Պրազիլիոյ հանքերուն գիւտին պատճառաւ, և 1844ին, Պահիայի հանքերուն գտնուած ատենը։ Մէկ քառ. միջին տեսակ աղամանդը, որ այն ատեն 300 ֆր. էր, մինչեւ 7-800ի բարձրացաւ Բ. Կայսրութեան վերջերը։ Բարեյոյսի հանքերուն գտնուած ատեն իջաւ 500ի, 400ի և յետոյ 300ի։ Ֆրանսայի, Անգլիոյ, Ամերիկայի և Գերմանիոյ հանրային հարըստութեան աճման հետ աղամանդն ալ ժողովրդականացաւ և արտադրութեան հսկայ յաւելման հակառակ խնդրանքը գրէթէ հաւասարեցաւ մատուցումին։ 1888էն 1893 խամ աղամանդի զիններուն անհաստատ վիճակը, ինչպէս նաեւ վաճառականաց ոմանց մրցակցութիւնը պատճառ եղան որ Լոնտոնի 5 խոշոր Տուներ հսկայ սեփեմա մը կազմեցին։ Այս սէնտիքան յանձն առաւ ամբողջովին գնել Տէ Պէէրսի բովանդակ արտադրութիւնը, ամսական 200,000 քառ., մէկ քառ.ը 34 ֆրանք 35 սանդիմի միօրինակ գնով, ամէն մեծութեամբ և ամէն տեսակ աղամանդի համար, մէջն ըլլալով նաեւ պօրդ ըսուած տեսակը, որուն քառ.ը 5 ֆրանք միայն կ'արժէ։ Սէնտիքան և Տէ Պէէրս պայման դրած էին նաեւ շահը կէս առկէս ընել, երբ 10,000 անգլիական ոսկե-

էն աւելի արժող ազամանդներ գտնուէին : Այսպիսի դրու-
թիւն մ'ալ կայ Եակէրոֆոնդայնի համար, որուն արտա-
դրութեան $\frac{2}{3}$ ը (205,000 քուպ) ուղղակի Ամերիկա կ'երթայ :
Խամ ազամանդը, Լոնտոն հասնելուն, կը մաքրուի և կը
դասաւորուի և ապա Հոլանտայի, Պելժիոյ, Ֆրանսայի և
ուրիշ երկրաց վաճառականներուն կը ծախուի միշտ քու-
պով (մէկ քուպը 0,201 կրամ է) : Ազամանդի վաճառակա-
նութիւնը, որ մեծ մասամբ միջնորդներու ձեռքով կը կա-
տարուի, արհեստակիցներու փոխադարձ վտահոլութեան և
պարկեշտութեան վրայ հիմնուած է բացարձակապէս : Մե-
ծարժէք կտորներ կը յանձնուին միջնորդներու, որոնց մէջ
խարդախութիւնը շատ հազուադիւր է : Գնումները խիստ
յաճախ կանխիկ կ'ըլլան և երբեմն ալ զանազան պայմանա-
ժամերով, Յէն 12 ամիս : [Ռ. Ս.]

ԱՊՐԻԱՆՈՒՊՈՒԽՍ. — [ԵՏԻՐՆԷ] Թուրքիոյ առեւտրա-
կան կարեւոր քաղաքներէն մին, Պոլսէ 225 քիլոմէտր հեռի :
Դիրքը՝ գեղեցիկ : Շինուած է Մարիցա գետին վրայ, որ
մինչեւ քաղաքը նաւարկելի է ձմրան ու գարնան : Ամառը
նաւերը կը կենան ի Տիմէթօքա : Բնակչաց թիւը, որ 1866ին
120,000 էր, 1896ին 78,000ի իջաւ : 10 կամ 12 տարի առաջ
Ադրբայձանի Պալքանեան թերակղզիին վաճառականու-
թեան կեդրոնն էր : Իր առեւտրական վիճակ այժմ նոյն
փայլը չունի : Արտածումներու գումարը, որ 1866ին կէս մի-
լիոն Օսմ. ոսկի էր, այժմ 300—350 հազար ոսկի է : Գլխա-
ւոր վաճառքներն են արմտիք, 30 %₀, խամ մորթ, 20 %₀,
ծխախոտ, 15 %₀, խոզակ և մետաքս, 14 %₀, արջառ, 9 %₀,
բուրդ, 6 %₀, զանազանք, 6 %₀ : Ներածումները, որք
1866ին 528,000 ոսկի էին, այժմ 350—390,000 են : Ներած-
ուած ապրանքներուն գլխաւորներն են մանիֆադուրա, 42 %₀,
գաղթաբերք, 14 %₀, բրինձ, օճառ և աղ, 14 %₀, կաշի,
5 %₀, քարիւղ, 4 %₀, զանազանք, 21 %₀ : Գլխաւոր ճար-
տարարուեստները, որք առաջ խիստ ծաղկեալ վիճակ մը
ունէին, են կաշեգործութիւն, մետաքսագործութիւն և
հիւսուածոններու ու ապայի (տեղական կերպաս մը) շինու-

Գ Ի Ն

12 Տետրի՝ դրու 12 ԿԱՆՆԵԻԿ

Գաւառաց հարկար՝ իբր բոսի ծախս՝ 3 դրու 2 աւելի

Հասցէ

ՍԻՄՕՆ ԶԷՏՄԼԷԳՁԵԱՆ

Ի Խմբագրատուն «Քիւզանդիոն» Հայաստանի

Պապը Ալի Գասսեսի քիւ 23—25 Կ. Պոլիս

ԱՆՀՐԱԺԵՇՏ

Ամէն վաճառականի, գրագրի, ուսանողի եւայլն.

معارف نظارت جلیله سنک ۳۰۳ نومرولی و فی ۱۶ تشرین اول
سنه ۱۳۱۶ تاریخلو رخصتنامه سیله طبع اولمشدر

«Ազգային գրադարան»



NL0083828

